Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի հ. 2 հիմնական

Թեմա՝ Մոտիվացիան որպես ուսուցման կարևորագույն մաս

Վերապատրաստող, մենթոր՝Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Անի Խառատյան

Սիսիան - 2023

Բովանդակություն

Ներածություն…….....3

Մոտիվացիայի զարգացման տեսական հիմքերը …….....5

Դպրոցականների մոտ մոտիվացիայի անկման պատճառները ……...11

Մոտիվացիայի ձևավորման եղանակները դպրոցականների մոտ……..14

Մոտիվացիայի խթանման իմ փորձը ……..17

Եզրակացություն……...…..20

Օգտագործված գրականության ցանկ……...…..22

Ներածություն

«Все наши замыслы превращаются в прах, если нет у ученика желания учиться».

Василий Александрович Сухомлинский

Ժամանակակից կրթական համակարգը անընդհատ փոփոխության է ենթարկվում, տեղի են ունենում կազմակերչական փոփոխություններ, ուսումնական նորարական տեխնոլոգիաներ են ավելանում, իսկ հները՝ բարելավվում: Այս ամենի հետ մեկտեղ հաճախ ուսուցիչները աշխատում են այնպիսի երեխաների հետ, ովքեր սովորելու ցանկություն չունեն: Այսօր աշակերտները բացի այն, որ պետք է ունենան գիտելիքների պաշար, հմտություններ և կարողություններ, պետք է ունենան նաև ուսուցման գործընթացում ինքնազարգացման, ինքնահաստատման և ինքնակրթության ներքին ցանկություն: Հետևաբար՝ այսօր ուսուցչի հիմնական խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանամանկավարժական մթնոլորտ ուսուցողական մոտիվացիայի ձևավորման համար: Յուրաքանչյուր գործողություն, ինչպես նաև ուսումնականը, իրականացվում է մի շարք փաստերի հիման վրա, որոնց հիմքում ընկած են կարիքները: Հենց կարիքներն էլ գործողությունների կատարման պատճառ են հանդիսանում, որը մանկավարժները անվանում են դրդապատճառներ: Դրդապատճառների ամբողջությունը կազմում է անձի մոտիվացիան: Լինելով ուսումնական գործունեության կառավարող՝ մոտիվացիան ներթափանցում է սովորողների հոգեբանական գործողությունների մեջ և իր ազդեցությունն է թողնում ողջ մոտիվացիոն համակարգի և հարաբերությունների վրա:

Մոտիվացիայի խնդիրն է՝ գտնել աշակերտների համար արդյունավետ մեթոդներ և ձևեր հմտությունների ու կարողությունների զարգացման համար, նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը:

Ուսուցիչների առաջնային քայլերը ուղղված են ուսումնական մեթոդների բարելավմանը, մինչդեռ աշակերտների ուսումնական մոտիվացիան կապված է նրանց անհատական հոգեբանական դժվարությունների հետ, որը հենց ուսումնական-ճանաչողական գործունեության խթան է հանդիսանում: Մոտիվացիայի առաջացման

խնդիրը ժամանակակից իրականության մեջ կարևոր դիրք է գրավում և՛ հոգեբանության, և՛ մանկավարժության մեջ։[1]

Իմ հետազոտական աշխատանքի ***նպատակն*** է ուսումնասիրել և հետազոտել ուսուցման մոտիվացիայի ձևավորումը հիմնական դպրոցում։ Հետազոտության ***արդիականությունը*** *այն* է, որ ներկայիս ժամանակներում անհրաժեշտություն է ծագել բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը, մշակել նոր տեսական, մեթոդական և կազմակերպչական-մեթոդական հանձնարարականներ, որոնք կնպաստեն ժամանակակից կրթության զարգացմանը։

Նպատակից ելնելով՝ ձևավորվել են հետազոտության հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը,
2. պարզել դպրոցականների մոտ մոտիվացիայի անկման պատճառները,
3. դուրս բերել աշակերտների համար կարևոր դրդապատճառները և ուսուցման մոտիվացիայի ձևավորման արդյունավետ պայմանները,
4. մշակել ռազմավարություն հիմնական դպրոցի աշակերտների ուսուցման մոտիվացիայի ձևավորման և զարգացման համար։

Հետազոտության ***վարկածն*** այն է, որ առարկայի հանդեպ ունեցած սերը և հետաքրքրությունը նպաստում են սովորելու մոտիվացիայի ձևավորմանն ու բարձրացմանը։

[1]Учебная мотивация современного школьника https://studbooks.net/1784305/pedagogika/vvedenie

Մոտիվացիայի զարգացման տեսական հիմքերը

Մոտիվացիայի կարևորության զարգացումը կապված է մարդկային գործունեության, ակտիվության, վարքագծի, շարժիչ ուժերի վերլուծության հետ: Պատասխանելով այս հարցերին, թե «ի՞նչն է դրդում մարդուն ինչ-որ գործունեության կատարել, ի՞նչն է պատճառը և ի՞նչի համար է նա դա անում» հենց մոտիվացիայի մեկնաբանման հիմքն է հանդիսանում: Ընդհանուր առմամբ՝ մոտիվացիան այն է, ինչ որոշում է, խթանում է մարդուն կատարել ինչ-որ գործունեություն:

Մարդուն, որպես կանոն, գործունեության դրդում են շատ դրդապատճառներ, որոնք ձևավորում են մոտիվացիոն համակարգ: Այդ համակարգում որոշ դրդապատճառներ ունեն առաջնային նշանակություն և մեծ դրդողական ուժ, իսկ մյուսների ազդեցությունը քիչ է և գտնվում են ստորին մակարդակում: Մոտիվացիան դրսևորվում է տարբեր ուժով՝ կախված կոնկրետ հանգամանքներից, այլ մարդկանց ազդեցությունից, ժամանակային գործոններից:[2]

Ըստ Լ.Ի. Բոժովիչի՝ մոտիվացիան այն է, որի համար իրականացվում է գործունեությունը, «դրդապատճառ կարող են լինել արտաքին աշխարհի օբյեկտները, պատկերացումները, գաղափարները, զգացմունքները և մտահոգությունները: Մի խոսքով՝ այն ամենը, ինչի անհրաժեշտություն է առաջացրել»: Միևնույն ժամանակ շեշտենք, որ «մոտիվացիան» «ծառայում է որպես բարդ մեխանիզմ համադրելով անձի արտաքին և ներքին վերաբերմունքային գործոնները, որը որոշում է, ուղղորդում է, ինչպես նաև որոշում է գործունեության իրականացման կոնկրետ ձևեր»:[3]

Հետազոտողների մի մասը մոտիվացիայի տակ հասկանում են հոգեկան երևույթ, որը հանդիսանում է խթան գործողության կատարման համար: Մյուսները կարծում են, որ մոտիվացիան գիտակցված պատճառ է, որի հիմքում ընկած է գործողությունների և արարքների ընտրությունը: Կա նաև մեկ այլ տարբերակ. մոտիվացիան արտացոլվելով մարդու գիտակցության մեջ՝ հանդիսանում է գործողության կատարման

---

[2]Занюк С. Психология мотивации. Теория и практика мотивирования. Мотивационный тренинг. Ника-центр, Эльга-Н, 2001г, стр. 6-7.
[3]Зимняя И.А. Педагогическая психология. – М., 2010г., стр.130-131.

դրդապատճառ և ուղղորդում է այն որոշակի կարիքի բավարարման համար (իսկ մոտիվացիան այստեղ ոչ թե կարիքն/պահանջն է, այլ դրա առարկան)։

Հոգեբան Բ. Բոժովիչը և նրա ուսանող Լ.Ս. Վյոտկինը, մեկնաբանել են մոտիվացիան որպես «ինչ-որ բան, որի համար կատարվում է նպատակաուղղված գործունեություն»։ Այս դեպքում մոտիվացիա կարող են հանդիսանալ իդեալները, հետաքրքրությունները, հավատալիքները, սոցիալական գործոնները, տարբեր արժեքները։

«Մոտիվացիա» հասկացությունը ավելի լայն է, քան «դրդապատճառ» հասկացությունը։ Ընդհանուր հոգեբանական համատեքստում մոտիվացիան հոգեբանորեն բազմակողմանի գործոնների համակարգ է, որը կանխորոշում է անձի վարքագիծը և գործունեությունը։ [4]

Ուսումնական մոտիվացիան ուղղորդում և աջակցում է ուսումնական գործունեության իրականացմանը։ Սա իրենից ներկայացնում է մի բարդ, համապարփակ համակարգ, որը ձևավորում է շարժառիթների, նպատակների անհաջողության արձագանքների, հաստատակամության և սովորողների տեղորոշման համար։

Մոտիվացիան կարող է ունենալ՝



[4]Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М., 1990 г., стр. 5.

Եթե գործունեությունը ինքնին կարևոր է, աշակերտը սովորում է հետաքրքրությունից դրդված, դասը հաճույք է պատճառում նրան և ավելի շատ գիտելիք է ցանկանում ստանալ, ապա գործ ունենք ներքին մոտիվացիայի հետ:

Իսկ եթե գործունեության կատարման համար խթան են հանդիսանում արտաքին գործոնները, օրինակ՝ ծնողներին գոհացնել, բարձր գնահատական ստանալ, ընդունվել ուս. հասատատություն և այլն, ապա գործ ունենք արտաքին մոտիվացիայի հետ:

Սովորողների ուսումնական մոտիվացիան կարող է լինել տարբեր՝ կախված նրանց տարիքից և նույնիսկ տրամադրությունից:

Այսպիսով՝ անձի որոշակի գործունեության հիմքում ընկած են մի քանի շարժառիթներ, պահանջմունքներ, կարիքներ, որոնք ուղղորդում են նրա վարքը:[5]

Ուսուցման մոտիվացիան ընթանում է երկու ճանապարհով՝

1. Սովորողի կողմից նյութի իմաստի յուրացման միջոցով,

[5]ԹունյանՋ.Ե., Երիցյան Լ.Մ.: Կրտսերդպրոցականիհոգեբանություն, Երևան, 2013:

2. Հենց ուսուցման գործընթացի միջոցով, որը պետք է հետաքրքրի սովորողին:

Առաջին պարագայում անհրաժեշտ է օգնել սովորողներին հասկանալ գնահատականի և իրենց գիտելիքների ու կարողությունների մակարդակի կապը: Երկրորդ պարագայում անհրաժեշտ է ստեղծել համապատասխան միջավայր, որը հետաքրքրություն կառաջացնի երեխաների մոտ ուսման պրոցեսի նկատմամբ:

Ինչպես արդեն նշվել է, մարդկային գործունեության, ինչպես նաև դպրոցականների գործունեության ակտիվ դրդապատճառ է հանդիսանում հետաքրքրությունը: Հետաքրքրությունը գործունեության հիմնական պատճառն է: Սա է պատճառը, որ շատ մանկավարժներ երեխաների հետաքրքրության պահպանման համար կարևոր պայման են տեսնում նրանց ակտիվությունը ուսուցման գործընթացում: Ակտիվացումը կարող է սահմանվել որպես շարունակական գործընթաց, որը խթանում է ակտիվ, նպատակաուղղված ուսուցմանը՝ հաղթահարելով պասիվ և կարծրատիպային գործընթացը: [6]

Ուսուցման մոտիվացիան դպրոցական կրթության առանցքային խնդիրներից մեկն է: Այն դեպքերում, երբ երեխան չի ցանկանում դպրոց հաճախել, զգում է անհանգստություն և վախ, դպրոցում ստացված նոր գիտելիքները դժվար են յուրացվում, հմտությունները և ունակությունները դժվարությամբ են կիրառվում, ապա ծնողների առջև դրվում են մի քանի բարդ խնդիրներ.

- Իմանալ, թե ինչու երեխան չի ուզում սովորել.
- Որոշել, թե ինչպիսի դրդապատճառներ են ձևավորված, և որոնք ձևավորված չեն:
- Որ դեպքերում երեխան չի ուզում սովորել:

Ուսուցման մոտիվացիան եզակի գործընթաց է, որի նպատակն է խրախուսել և կազմակերպել սովորողի վարքագիծը, որը նշանակություն և իմաստ է հաղորդում ուսուցման գործունեությանը: Առաջատար գիտնականների՝ ինչպիսիք են, Լ.Ի.Բոժովիչը, Ա.Կ. Մարկովը, բազմաթիվ հետազոտություններ մանրակրկիտ ուսումնասիրում են

[6]Мискарян М. Роль инновационных технологий в формировании мотивации учения. Учебно-методическое пособие — Ер. Лингва, 2012 г., стр. 7-17.

ուսուցման մոտիվացիան: Ուսուցման մոտիվացիայի դասակարգման տարբեր մոտեցումներ կան: Հատուկ ուշադրություն է դարձվում հաջողության հասնելու մոտիվացիան, ինչպես հիմնական գործոն, որը ազդում է աշակերտի հաջողությունների վրա:[7]

Ա.Կ.Մակարովան ուսուցման գործընթացը բաժանում է երեք փուլի՝ նախնական մոտիվացիայի դրսևորման փուլ, նրա ամրապնդման փուլ և ավարտի փուլ:[8]

[7]Алла Нагинайло, Формирование мотивации учения // https://4brain.ru/blog/123
[8]Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М., 1990 г., стр. 57-61.

Նախնական մոտիվացիայի դրսևորման փուլ

- Այս փուլում անհրաժեշտ է հիշեցնել նախորդ արդյունքներից ստացած մոտիվացիան («Մենք շատ լավ արդյունքների հասանք նախորդ թեմայի ժամանակ»:),
- նշել, թե նախորդ անգամ որ դրդապատճառները թերի մնացին («Սակայն մենք չքննարկեցինք/չյուրացրեցինք նախորդ թեմայի կարևոր կողմերից մեկը»:),
- բարձրացնել նոր աշխատանքի հանդեպ մոտիվացիան («Այն, ինչ անելու/սովորելու ենք այսօր, պետք կգա ձեզ կյանքում...»)

Մոտիվացիայի ամրապնդման փուլ

- Այս փուլում ուսուցիչը հիմնվում է սոցիալական և ճանաչողական մոտիվացիայի վրա: Նա կարող է ինքուրույն ընտրել գործունեության հերթականությունը (բանավոր, գրավոր, դժվար, բարդ, անհատական, խմբային), նյութի բարդությունը, գնահատման տեսակը:

Դասի ավարտի փուլ

- Դասի ավարտին աշակերտը պետք է ունենա դրական փորձ և ցանկություն հետագա ուսուցման համար:

Դպրոցականների մոտ մոտիվացիայի անկման պատճառները

Ժամանակակից դպրոցների հիմնական խնդիրն է հանդիսանում աշակերտների սովորելու ցանկության և ուսուցման մոտիվացիայի բացակայությունը: Երեխաների մի մասի մոտ այն անհետանում է՝ դեռ չառաջացած, մյուսների մոտ՝ ուսուցման գործունեության ընթացքում: Այստեղ է հենց առաջանում այնպիսի իրավիճակ, որ երեխան կարող է շատ լավ սովորել և ունենալ մեծ հաջողություններ, սակայն չունի ցանկություն: Մոտիվացիայի անկման պատճառները կարող են սկսվել շաղ վաղ ժամանակներից և պահպանվել կամ շարունակվել մինչև բարձր դասարաններ:

Ուսուցման մոտիվացիայի ստեղծումը ճանաչողական գործունեության անբաժանելի մասն է կազմում: Այն հնարավոր է մի քանի փաստերի առկայության հիմա վրա՝

- ուսուցիչները, որոնք ազդում են երեխայի գիտակցության վրա,
- ուսուցչական կոլեկտիվի կողմից տարվող աշխատանքը տվյալ ուղղությամբ,
- ուսուցչի և աշակերտի գործունեության համար բարենպաստ մթնոլորտ,
- անհրաժեշտ տեխնոլոգիայի և մեթոդների առկայությունը,
- անհանգստացնող և շեղող փաստերի բացակայությունը դասապրոցեսի ժամանակ:

Ուսուցման մոտիվացիայի կարևոր բաղկացուցիչ մաս է հանդիսանում սոցիալական ակտիվությունը՝ ուսուցմանը վերաբերվել ինչպես հաղորդակցություն, համագործակցություն, փոխգործունեություն դասընկերների, ուսուցիչների և ծնողների միջև: Երեխաները, դպրոց ընդունվելով, ունեն բարձր սոցիալական դրդապատճառներ, նրանք ցանկանում են սովորել և ունեն պարտքի զգացում, սակայն տարիների ընթացքում նրանց վերաբերմունքը սկսում է փոխվել: Այստեղ փոխվում է նաև ուսուցչի հանդեպ վերաբերմունքը: Նա դադարում է կենտրոնական դիրքում լինել երեխաների համար, քանի որ փոխվում է երեխաների ներքին դրդապատճառները, մոտիվացիան և համագործակցության ձևերը: Կան մի շարք պատճառներ, որոնք նպաստում են մոտիվացիայի անկմանը:

- Պատանիների մոտ լինում է անցումային շրջան, որը մեծապես ազդում է նրանց տրամադրության, տրամադրվածության, կյանքի նկատմամբ տարբեր նպատակների որոշման վրա։
- Արդեն իսկ ցածր մոտիվացիա ուսուցման նկատմամբ։
- Ապագայի հանդեպ անորոշության զգացում։
- Ուսուցչի հանդեպ վատ կամ սխալ վերաբերմունք։
- Ուսուցչի վատ կամ սխալ վերաբերմունքը աշակերտի հանդեպ։
- Առարկայի նկատմամբ անձնական վերաբերմունքը։
- Աշակերտի մտավոր կարողությունները։
- Ուսուցման գործընթացի արդյունավետությունը։
- Ուսուցման նպատակի ոչ հստակ ձևակերպվածությունը։
- Նպատակ ձևավորելու անկարողություն։
- Դժվարությունների հաղթահարման անկարողություն։
- Ուսուցման գործունեության իրականացման մեթոդների բացակայություն։
- Մեծահասակներին չենթարկվելը։
- Դպրոցի հանդեպ վախը։
- Շեղող հանգամանքներ, ինչպիսիք են բջջային հեռախոսները, համացանցում մշտական ակտիվությունը։ [9]

Ինչպես ցույց է տալիս փորձը, ուսուցիչները հիմնականում ուշադրություն չեն դարձնում աշակերտների մոտիվացիային։ Շատ ուսուցիչներ կարծում են, որ եթե երեխան եկել է դպրոց, ուրեմն նա պետք է անի այն, ինչ նրան կհանձնարարվի։ Կան ուսուցիչներ, որոնք հիմնականում հենվում են բացասական մոտիվացիայի վրա։ Նման դեպքերում աշակերտները ցանկանում են հեռու լինել տարբեր տեսակի անախորժություններից՝ ծողների կամ ուսուցիչների կողմից պատիժների, ցածր գնահատական ստանալուց և այլն։ Այս դեպքերում երեխաների մոտ արթնանում է վախ

[9]Мишина Елена, Снижение мотивации к учебной деятельности старших школьников // https://nsportal.ru/ap/library/drugoe/2014/02/26/snizhenie-motivatsii-k-uchebnoy-deyatelnosti-starshikh-shkolnikov

դպրոցի և ուսուցիչների հանդեպ։ Ուսումնական գործունեությունը հաճույք և ուրախություն չի պատճառում։ Սա անհաջողության նշան է, քանի որ նույնիսկ մեծահասակը չի կարող երկար աշխատել նման պայմաններում։ Մոտիվացիայի անկման պատճառ են հանդիսանում գիտելիքների ցածր մակարդակը, համադասարանցիների հետ ոչ ճիշտ ձևավորված հարաբերությունները, երբեմն նաև հետամնացությունը։

Կարելի է առանձնացնել և քննարկել մի քանի ոչ արդյունավետ մոտիվացիոն կետեր։

1. Բացասական մոտիվատոր։ Կան մարդիկ, ովքեր իրենց կամ ուրիշներին կարողանում են մոտիվացնել՝ միայն մտածելով այն վատ բաների մասին, որոնք կարող են տեղի ունենալ այն ժամանակ, երբ նրանք ինչ-որ բան չանեն։ Օրինակ՝ «Եթե չհանձնեմ քննությունը, տանը ինձ վրա կբարկանան, վեճ կլինի, կմնամ նույն դասարանում»։ Սակայն բացասական մոտիվացիան կարող է արդյունավետ լինել քչերի համար։
2. «Բռնակալ» մոտիվատոր։ «Բռնակալը» մոտիվացնում է իրեն և ուրիշներին հրամաններ տալով։ Այս տեսակի մարդիկ շատ են օգտագործում «պետք է», «անհրաժեշտ է» կամ «պարտավոր է» բառերը։ Շատ երեխաներ դժգոհությամբ են անում հանձնարարվածը։ Ավելի արդյունավետ է հրամայելու փոխարեն ճիշտ հնչունայնությամբ օգտագործել «շատ լավ կլիներ», «շատ օգտակար կամ արդյունավետ կլիներ» կամ «մենք ցանկանում ենք» արտահայտությունները։
3. «Պատկերացնել ընթացքը» մոտիվացիա։ Շատ աշակերտների խանգարում է մտածելը այն բանի մասին, թե ինչպես պետք է կատարեն հանձնարարությունը (կատարեն, լուծեն առաջադրանքը, գտնեն պատասխանը, հիշեն նյութը), փոխարենը պատկերացնեն այն կատարված։ Նման աշակերտներին պետք է բացատրել, որ կարևոր չէ, թե ինչ ճանապարհով նա կկատարի հանձնարարությունը, այլ կարևոր է, որ նա կատարի հանձնարարությունը, այստեղ նույպես մղվում է դրական մոտիվացիան։ Այս մոտիվացիան ամենաոչարդյունավետ մոտիվացիան է, այդ իսկ պատճառով երբեմն պետք է դադարեցնել հանձնարարության կատարումը, եթե այն դժվարություն է առաջացնում։

4. Ծանրաբեռնվածության մոտիվացիա։ Կան աշակերտներ, ովքեր հակված են պատկերացնելու իրենց կատարելիք աշխատանքը ինչպես մի մեծ, ահռելի աշխատանք, և բնականաբար իրենց զգում են ծանրաբեռնված։ Նման զգացողություն ունեցող մարդիկ չեն կարողանում նույնիսկ կատարել տվյալ աշխատանքը, հանձնարարությունը և հակված են անընդհատ հետաձգելու այն։ Նման աշակերտներին պետք է օգնել բաժանել աշխատանքը փոքր մասերի, որը կօգնի նրանց հերթականությամբ կատարել աշխատանքը։ [10]

Ուսուցման մոտիվացիայի բացակայությունը անհաջողությունների և մտավոր պասիվության պատճառ է հանդիսանում։ Անհաջողությունն էլ իր հերթին անդրադառնում է աշակերտների վարքի վրա։

Մոտիվացիայի ձևավորման եղանակները դպրոցականների մոտ

Աշակերտների մեջ մոտիվացիայի ձևավորում նշանակում է ոչ թե երեխաներին տալ պատրաստի նպատակ և դրդապատճառներ, այլ ստեղծել բարենպաստ պայմաններ մոտիվացիայի ձևավորման համար։

Կրթական գործընթացում ուսուցչի խնդիրներից մեկն է ստեղծել աշակերտների համար բարենպաստ պայմաններ և մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր աշակերտ իրեն լավ և ապահով կզգա, որտեղ նրանք պատրաստ կլինեն իրենց էներգիան ծախսել ուսումնական գործունեության և ինքնազարգացման վրա։

Շատ կարևոր է ստեղծել հաճելի և տրամադրող մթնոլորտ այն դասարանում, որտեղ սովորում են երեխաները, այն պետք է լինի մաքուր, կոկիկ, գեղեցիկ, լուսավոր և տրամադրող։ Նման մթնոլորտ պետք է ստեղծի ուսուցիչը իր աշակերտների հետ միասին, քանի որ նրանց ներգրավվածությունը շատ կարևոր է։ Այդ ներգավվածությունը հետագայում պետք է անցնի նաև դպրոցին վերաբերող յուրաքանչյուր հարցին։

Երեխայի ուշադրությունը դեպի գիտելիք ստանալը ուղղելու համար կարելի է օգտագործել մշակված ուսուցանող մեթոդներ։ Այդ մեթոդներից են.

[10]Мотивация учения. Причины снижения мотивации //http://www.shcool5.edusite.ru/p52aa1.html

- քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով,
- համագործակցային ուսուցում,
- խաղային մեթոդների կիրառումը ուսուցման գործընթացում և այլն։

Նոր մեթոդները հիմնված են անձնական կողմնորոշման ուսուցման վրա։ Դրանք պահանջում են եկող սերնդի կրթության և ուսուցման ռազմավարությունների փոփոխություններ։ Առաջնային դիրքում է անձնային այնպիսի որակների դաստիարակումը, որոնք կօգնեն սովորողին ակտիվ դիրք գրավել կյանքում, ինքնուրույն ձևավորել ուսուցողական հետագիծը, մասնագիտական աճը, հանդուրժողականությունը, այլ մարդկանց հետ շփումը և համագործակցությունը։ [11]

Համաձայն Ա.Լեոնտևի՝ արդյունավետ մանկավարժական շփումը նպաստում է սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, ուսումնական գործունեությանը ստեղծագործական բնույթի հաղորդմանը, երեխայի անձի ձևավորմանը, կրթության դրական մթնոլորտի ստեղծմանը, ներխմբային գործընթացների արդյունավետ կառավարմանը, ուսումնական դժվարությունների հաղթահարմանը։ Արդյունավետ շփումը օգնում է ուսուցչին և երեխային լիարժեք բացահայտել սեփական ներաշխարհը և դրսևորել այն։ Ուսուցիչը արդյունավետ է շփվում երեխաների հետ, եթե՝

- բարյացակամ է և քաջալերող,
- թույլ է տալիս աշակերտին ինքնուրույնություն դրսևորել, հայտնել սեփական կարծիքը, ազատ արտահայտվել։
- ակտիվ է, հետաքրքրված, լիովին ընդգրկված ուսումնական գործընթացի մեջ։
- անկեղծ է, չի վախենում ցույց տալ իր թերությունները։
- դինամիկ է և ճկուն շփման մեջ, արագ ըմբռնում է առկա դժվարությունները, լուծում կոնֆլիկտները։
- հարգալից է, հասկացող, ընդունող աշակերտի անձը, ցուցաբերում է անհատական մոտեցում
- կարող է դժվարությունը դիտել երեխայի տեսակետից ելնելով, պատրաստ է ռեֆլեքսիայի, աշակերտի մոտ առաջացնում է վստահություն, որ իրեն հասկացել են

[11]Мискарян М. Роль инновационных технологий в формировании мотивации учения. Учебно-методическое пособие — Ер. Лингва, 2012 г., стр. 62.

- ակտիվ է, դասարանը պահում է դրական լարվածության մեջ:

Ուսուցման մոտիվացիայի բարձրացման հետ կապված՝ կարելի է առանձնացնել մի քանի առաջարկություններ.

1. Ճիշտ մոտենալ երեխային՝ հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները:
2. Լինել ուշադիր երեխայի նկատմամբ: Հետևել նրանց, փորձել հասկանալ մտքերը, մտածողությունը, զգացմունքները:
3. Ստեղծել երեխայի համար այնպիսի մթնոլորտ, որը կօգնի նրան զարգանալ, հետաքրքրություն և դրական զգացմունքներ կառաջացնի նրա մեջ:
4. Ժամանակ հատկացնել երեխային: Հասկանալ նրա հետաքրքրությունները:
5. Աջակցել երեխային միայն այն ժամանակ, երբ նա ինքն է խնդրում:
6. Խուսափել գնահատական տալուց: Ցանկալի է ասել, որ նա լավ է կատարել աշխատանքը:
7. Երեխաներին հարցեր տալ: Հետաքրքրվել՝ արդյոք նրանք գոհ են իրենց ուսուցման գործունեությունից:
8. Կարելի է ունենալ տետր, որի մեջ երեխաները կարող են գրել իրենց նպատակը տվյալ օրվա, շաբաթվա, ամսվա, կիսամյակի կամ տարվա համար:
9. Առաջարկել երեխային ստեղծել նպատակ, որոշել այդ նպատակի իրագործման ճանապարհը և քայլերը:
10. Խրախուսել, երբ երեխան նպատակ է դնում, իսկ եթե այն հեշտ հասանելի է, ապա առաջարկեք ավելի դժվար հասանելի նպատակ:
11. Օգնել երեխային հասկանալ իր կողմից ներդրած ջանքերի և ստացված վերջնարդյունքների կապը: Պարզել՝ ինչն էր դժվար, և ինչպես հաղթահարեցին դժվարությունը:
12. Քննարկել հաջողությունների և անհաջողությունների պատճառները:
13. Ուսուցումը հարմարացնել բոլոր մակարդակներին՝ չանտեսելով ցածր մակարդակը:

14. Տալ աշակերտին ինքնավստահություն:
15. Խրախուսել նրանց կողմից գրանցած հաջողությունները և դրական վարքի դրսևորումները:
16. Ստեղծել հաջողության հասնելու իրավիճակներ:
17. Կիրառել մեթոդներ, որոնք առավել հետաքրքիր կդարձնեն ուսումնառությունը (խմբային աշխատանք, խաղային մեթոդներ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառություն):
18. Ներկայացնել այդ դասի ընթացքում կոնկրետ անելիքը, ինչի շնորհիվ աշակերտն ունենում է իր առջև դրված խնդիր, որը պետք է հաղթահարի:
19. Ուսուցանվող նյութը հնարավորինս կապել առօրյա կյանքում հանդիպող իրավիճակների հետ և կազմակերպել քննարկումներ:
20. Ցույց տալ դպրոցական առարկաների և իրական կյանքի միջև կապը:

Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել ուսուցչի խրախուսումներին: Ուսուցչի գովասանքի խոսքերը խրախուսում են երեխային այն դեպքում, երբ առաջադրանքը երեխայի համար ընկալվում է որպես բարդ, և այս խրախուսանքի ժամանակ երեխան հասկանում է, որ ունի բարձր կարողություններ:

Աշակերտի մոտիվացիայի ակտիվացման համար այնքան էլ կարևոր չէ ուսուցչի նշանակած գնահատականը, որքան այդ գնահատականի մեջ թաքնված տեղեկությունը իր կարողությունների մասին: Ուսուցչի գնահատականը բարձրացնում է շարժառիթները, եթե դա վերաբերվում է երեխայի ներդրած ջանքերին առաջադրանքի կատարման համար: Ուսուցչի համար ոչ թե կարևոր է հավատալ երեխայի ջանքերին, այլ ակտիվացնել աշակերտի մոտ նոր ջանքեր: Ուստի պետք չէ բավարարվել սովորողների մոտ առկա մոտիվացիայով, այլ անհրաժեշտ է աշխատանք կատարել մոտիվացիայի ակտիվացման համար:

Մոտիվացիայի խթանման իմ փորձը

Իմ կողմից կատարված հետազոտությունն իրականացվել է տարրական դպրոցի երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում ռուսաց լեզվի դասաժամերին:

Հետազոտությունը ցույց տվեց, որ տարրական դպրոցում մոտիվացիայի ակտիվացմանը նպաստում են այնպիսի դասերն, որոնց ընթացքում կիրառվում են խաղային մեթոդներ, մրցույթներ, դերային ներկայացումներ, ՏՀՏ գործիքակազմ, խաչբառերի լրացնելը, հանելուկների գուշակելը, նոր բացահայտումներ կատարելը, ինչպես նաև ուսումնասիրվող նյութը առօրյա կյանքի հետ կապելը, տարատեսակ քննարկումները, թե ինչպես աշակերտները կվարվեին այս կամ այն իրավիճակում: Օրինակ՝ 2-րդ դասարանում հաճախ ենք խաղում <<ո՞վ ավելի շատ բառ կասի>> խաղը, ցույց է տրվում տառեր և աշակետները ներկայացված տառերով ասում են այն բառերը, որոնք գիտեն, յուրաքանչյուր ճիշտ պատասխան աշակերտին տալիս է 1 միավոր, խաղի վերջում հաղթող է ճանաչվում ամենից շատ բառեր ասած աշակերտը: Վերոնշյալ խաղը մոտիվացնում է աշակերտներին և ապահովում բոլորի ներգրավվածությունը: Մոտիվացիայի բարձրացմանը նպաստում են նաև այնպիսի մրցույթներն, ինչպիսիք են <<Գտնենք սահուն կարդացողին և գեղեցիկ գրողին>>: Եվ որպես խրախուսման միջոց հաղթողները ստանում են աստղիկներ, ինչը նույնպես այդ տարիքային խմբի երեխաներին մոտիվացնում է հետագա ավելի լավ և ակտիվ գործունեություն իրականացնելու գործում:

3-րդ և 4-րդ դասարանի աշակերտների համար պլանավորած դասաժամերին ուսումնասիրվող նյութի վերաբերյալ մուլտֆիլի դիտումն է, որն ընդհատվում է և հնչում է դիտված հատվածի վերաբերյալ հարց: Սա նույնպես նպաստում է աշակերտների մոտ հետաքրքրության առաջացմանը և մոտիվացնում է հետագա գործունեության: Այդ մեթոդը կիրառվեց 3-րդ դասարանում Заяц Коська и Родничок https://mults.info/mults/?id=499, Карусельный Лев https://mover.uz/watch/dxflitym, Веселый кораблик https://www.youtube.com/watch?v=Hu-RyC2j-jQ, Как Винни-Пух полез за медом https://www.youtube.com/watch?v=Ep8KzQh0LrM, Как Львенок и Черепаха пели песню https://www.youtube.com/watch?v=nS7aWu7yvds, Теремок https://www.youtube.com/watch?v=HYmeksq4A1o թեմաներն ուսումնասիրելիս և 4-րդ դասարանում՝ Жил на свете слоненок https://www.youtube.com/watch?v=p-XMJnLhzxM сказка Почему зайцы зимой белые шубки носят https://www.youtube.com/watch?v=x9-OGkucJ9Q և արդյունքում՝ նյութը հեշտությամբ յուրացվեց, իսկ հարցադրումներին մասնակցեցին աշակերտների մեծ մասը:

Հաջորդ մեթոդը այն էր, երբ նոր նյութի ուսումնասիրության սկզբում кластер ենք կազմում, որը շատ հաճախ եմ կիրառում ինչպես տարրական դպրոցում, այնպես էլ միջին: Օրինակ՝ 4-րդ դասարանում Зимний вечер բանաստեղծությունն ուսումնասիրելիս գրատախտակի կենտրոնում գրվեց վերնագիրը և աշակերտները տարբեր բառերով նկարագրեցին, թե ինչպես են պատկերացնում ձմռան երեկոն, յուրաքանչյուրը գրեց իր արտահայտած միտքը, և աշխատանքն ամփոփվեց նախադասություն կազմելով, որից հետո ընթերցվեց բանաստեղծությունը, բացատրվեցին անծանոթ բառերը և կատարվեց համեմատություն աշակերտների նկարագրած և բանաստեղծության ձմռան երեկոյի միջև՝ ինչով էին նման և ինչով տարբեր, բնութագրեցին նաև, թե ինչպիսին է լինում ձմռան երեկոն իրենց ծննդավայրում: Մասնակցություն ցուցաբերեցին բոլոր աշակերտները:

3-րդ դասարանում անձ և իր ցույց տվող գոյականներն ուսումնասիրելիս կպչուն թղթերի վրա գրվեցին գոյականները և աշակերներն ամրացրեցին ո՞վ և ի՞նչ հարցերի մոտ՝ ասելով տվյալ բառի իմաստը և թե ինչու են այդտեղ ամրացնում, արդյունքում ունեցանք նյութի հեշտ ընկալում, բառապաշարի հարստացում և բոլոր աշակերտները ցանկություն հայտնեցին մի քանի անգամ մասնակցություն ցուցաբերել և կպցնել այդ թղթերը:

Դերային ընթերցանությունն ու դերային ներկայացումները նույնպես այս տարիքային խմբի երեխաների մոտ մեծ հետաքրքրություն և սեր են առաջացնում, այդպիսի ներկայացումներ դասի ընթացքում ունեցանք 2-րդ դասարանում՝ Сказка про хвастушку букву Я. 3-րդ դասարանում որպես ամփոփման դասեր՝ Трудолюбивый Айболит,Трудолюбивые птицы. 4-րդ դասարանում՝ Вежливый кролик, Ступеньки, Жил на свете слоненок, Град, Почему зайцы зимой белые шубки носят, Какой бывает снег? Արդյունքում բոլոր աշակերտների ներգրավվածություն և դերերը ներկայացնելու մեծ ցանկություն:

Տարրական դպրոցի սովորողները սիրում են գրատախտակին գրելու գործընթացը, ուստի վարժություններ կատարելիս նույնպես ցուցաբերում են մեծ ակտիվություն: Այդ փաստը կարելի է օգտագործել երեխաներին ավելի մոտիվացնելու համար, հաճախակի կանչել գրատախտակի մոտ այն աշակերտներին, ում մոտ նկատվում է մոտիվացիայի անկում:

Աշակերտներին մոտիվացնելու արդյունավետ մեթոդներից է նաև հաջողության հասնելու իրավիճակների ստեղծելը, որն ուղեկցվում է գովեստի խոսքերով, օրինակ՝ «Կեցցե՛ս, տեսնում ես՝ դու կարողացար, ես վստահ եմ, որ դու ավելին էլ կարող ես անել»:

Եզրակացություն

Ուսուցման մոտիվացիան դպրոցական կրթության առանցքային խնդիրներից մեկն է, որի ստեղծումն ուսումնական գործունեության անբաժանելի և անհրաժեշտ մասն է կազմում:

Աշակերտների մեջ մոտիվացիայի ձևավորումը կախված է բարենպաստ մթնոլորտի ստեղծումից, որը կնպաստի սովորողների ակտիվ գործունեությանը: Այն դեպքերում, երբ ցածր է երեխայի մոտիվացիան, և նա չի ցանկանում դպրոց հաճախել, զգում է անհանգստություն և վախ, դպրոցում ստացված նոր գիտելիքները դժվար են յուրացվում, հմտությունները և ունակությունները դժվարությամբ են կիրառվում, կամ պարզապես նրա համար ամեն ինչ անհետաքրքիր է, ապա անհրաժեշտ է պարզել պատճառները, հասկանալ, թե արդյոք կա թերություն, որը գալիս է մեծահասակներից (ուսուցիչներից, ծնողներից): Մոտիվացիայի անկման պատճառները կարող են սկսվել շատ վաղ ժամանակներից և պահպանվել կամ շարունակվել մինչև բարձր դասարաններ: Երեխաների մի մասի մոտ մոտիվացիան անհետանում է դեռ չառաջացած, մյուսների մոտ ուսուցման գործունեության ընթացքում: Այդ իսկ պատճառով պետք է նախ պարզել մոտիվացիայի անկման պատճառները, հետո ձեռնարկել համապատասխան քայլեր դրա ձևավորման և զարգացման համար:

Դպրոցականների ուսուցման մոտիվացիան ակտիվացնելու համար անհրաժեշտ է երեխաների ակտիվությունը, ինչպես նաև կարևոր է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները: Տարրական դպրոցում մոտիվացիայի ակտիվացմանը նպաստում են այնպիսի դասերն, որոնց ընթացքում կիրառվում են խաղային մեթոդներ, մրցույթներ, դերային ներկայացումներ, ՏՀՏ գործիքակազմ, խաչբառերի լրացնելը, հանելուկների գուշակելը, նոր բացահայտումներ կատարելը, ինչպես նաև

ուսումնասիրվող նյութը առօրյա կյանքի հետ կապելը, տարատեսակ քննարկումները, թե ինչպես աշակերտները կվարվեին այս կամ այն իրավիճակում: Մոտիվացիայի ձևավորման և զարգացման համար ուսուցման նյութերը և դասավանդման մեթոդները պետք է լինեն բազմազան ու հետաքրքիր: Կիրառվող կպչուն գունավոր թղթերը, աստղիկները այդ տարիքային խմբի աշակերտներին մղում են ակտիվ գործունեության: Տարրական դպրոցի երեխաների մոտիվացիան բարձրացնելու ուղիներից մեկն էլ աշակերտներին հաճախակի գրատախտակի մոտ կանչելն է, քանի որ այդ հասակում երեխաները հաճույքով են գրում գրատախտակին, ուստի այդ փաստը կարելի է օգտագործել այն աշակորտներին մոտիվացնելու համար, որոնց մոտ նկատվում է մոտիվացիայի անկում: Փորձը ցույց է տալիս, որ դասապրոցեսի ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաների, համագործակցային և խաղային մեթոդների կիրառությունը նունպես նպաստում են մոտիվացիայի զարգացմանը:

Նշելով ուսուցման և աշակերտների մոտիվացիայի մասին՝ չպետք է մոռանալ, որ ուսուցիչներն էլ իրենց հերթին պետք է լինեն մոտիվացված և սերունդ կրթելու ցանկությամբ լի, որի համար նույնպես անհրաժեշտ են մի շարք համապատասխան պայմաններ:

Այսպիսով՝ մոտիվացիայի ձևավորումը բավականին բարդ ու կարևոր գործընթաց է, սակայն համապատասխան պայմանների և ցանկության առկայության դեպքում այն հնարավոր է ակտիվացնել, որը իր հերթին կնպաստի նպատակաուղղված ուսումնական գործընթացի ձևավորմանը և կրթության որակի արդյունավետության բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ԹունյանՋ.Ե., ԵրիցյանԼ.Մ.: Կրտսերդպրոցականիհոգեբանություն, Երևան, 2013:
2. Асеев В.Г. Проблема мотивации и личности // Теоретические проблемы психологии личности. - М., 2004.
3. Асеев В.Г. Мотивация поведения и формирования личности. - М.Прогресс, 2006.
4. Аткинсон Дж.В. Теория о развитии мотивации. - М.: Акварель, 2006.
5. Божович Л.И. Проблема развития мотивационной сферы ребенка // Изучение мотивации поведения детей и подростков. - М., 2002.
6. Занюк с. Психология мотивации. теория и практика мотивирования. Мотивационный тренинг. Ника-центр, Эльга-Н, 2001.
7. Зимняя И.А. Педагогическая психология. – М., 2010.
8. Кулагина И.Ю., Колюцкий В.Н. Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. — М.: ТЦ «Сфера», 2001.
9. Маркова А.К., Формирование мотивации учения в школьном возрасте. – М., 1983.
10. Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М., 1990.
11. Мискарян М. Роль инновационных технологий в формировании мотивации учения. Учебно-методическое пособие — Ер. Лингва, 2012.
12. Мискарян М. Педагогика и социальные науки. “Создание благоприятной эмоциональной атмосферы в школе как первый шаг к гуманизации образования”.Բանբեր— Ер. Лингва, 2017.
13. Слотина Т. В. Психология личности. Учебное пособие .-СПб.: П., 2008.
14. Учебная мотивация современного школьника https://studbooks.net/1784305/pedagogika/vvedenie
15. Алла Нагинайло, Формирование мотивации учения // https://4brain.ru/blog/123

16. Мишина Елена, Снижение мотивации к учебной деятельности старших школьников // https://nsportal.ru/ap/library/drugoe/2014/02/26/snizhenie-motivatsii-k-uchebnoy-deyatelnosti-starshikh-shkolnikov
17. Мотивация учения. Причины снижения мотивации // http://www.shcool5.edusite.ru/p52aa1.html
18. Формирование мотивации учения // http://www.km.ru/333693-formirovanie-motivatsii-ucheniya